Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. սեպտեմբերի 26-ի թիվ 10 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«26» 09. 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է ԳՊՀ գործունեության բոլոր ուղղություններով հրապարակայնության, թափանցիկության, օբյեկտիվության, հաշվետվողականության ապահովման քաղաքականության հիմունքները, ուղղություններն ու կառուցակարգերը:
2. Կարգը հիմնված է ԳՊՀ կանոնադրության հիման վրա և կիրառվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Կարգը ընդունվում և փոփոխվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

II. ԳՊՀ գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման քաղաքականության հիմունքները

4. ԳՊՀ գործունեության բոլոր ուղղություններով՝ կրթական, գիտահետազոտական, վարչական, ֆինանսատնտեսական, արտաքին կապերի և այլ, իրականացվում է հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման քաղաքականություն:
5. ԳՊՀ գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման քաղաքականության հիմնական սկզբունքներն են.
   1) օրինականությունը,
   2) ժողովրդավարությունը,
   3) օրենքի առջև բոլորի հավասարությունը,
   4) սոցիալական արդարությունը,
   5) ակադեմիական ազնիվ միջավայրի ապահովումը,
   6) թափանցիկությունը, շահակիցների համար տեղեկատվության հասանելիության ապահովումը,
   7) հաշվետվությունների ժամանակին ներկայացումը,
   8) կարգապահությունը:

6. ԳՊՀ գործունեության բոլոր ոլորտներում իրականացված աշխատանքների և ձեռքբերված արդյունքների վերաբերյալ հրապարակայնություն և հաշվետվողականություն ապահովելիս՝ պարտադիր է բարեվարքության նորմերի, մասնավորապես, ԳՊՀ էթիկայի կանոնների պահպանումը, պատասխանատվության ստանձնումն ու կրումը, հաշվետվությունների ժամանակին և պատշաճ ներկայացումը, հրապարակայնության ապահովումը:

7. ԳՊՀ-ում հրապարակայնության և ներքին ու արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործառույթներն իրականացնում են հետևյալ մարմինները.

1) Հոգաբարձուների խորհուրդ,
2) գիտական խորհուրդ,
3) ռեկտոր,
4) պրոռեկտորներ,
5) դեկաններ,
6) կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ,
7) ուսանողական ինքնակառավարման մարմիններ,
8) Համալսարանի յուրաքանչյուր վարչական աշխատակից:

8. Սույն Կարգի 7-րդ կետում նշված բոլոր մարմիններն ու աշխատակիցներն ապահովում են հրապարակայնություն և ներքին ու արտաքին շահակիցների առջև հաշվետվողականություն՝ իրենց գործառույթներին և լիազորություններին համապատասխան:

III. ԳՊՀ գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման հիմնական ուղղություններն ու կառուցակարգերը

9. ԳՊՀ գործունեության հրապարակայնությունն ու ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

1) ուսումնական գործընթաց,
2) կրթության որակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ,
3) գիտահետազոտական գործունեություն,
4) ֆինանսական գործունեություն,
5) տնտեսատեխնիկական գործունեություն,
6) մարդկային ռեսուրսների կառավարում,
7) ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեություն,
8) արտաքին կապեր և համագործակցության ծրագրերի իրականացում,
9) հասարակական պատասխանատվություն,
10) տեղեկատվության տրամադրում և կառավարում,
11) միջազգայնացում,

12) վարչարարություն:

10. ԳՊՀ գործունեության բոլոր ուղղություններով իրականացված աշխատանքների և արձանագրված արդյունքների, ինչպես նաև ԳՊՀ ռազմավարական ծրագրի և ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի դրույթների իրականացման նպատակով պլանավորված գործողությունների վերաբերյալ հրապարակայնությունն ու հաշվետվողականությունն ապահովվում են հետևյալ կառուցակարգերով.

1) ԳՊՀ ռեկտորը Համալսարանի տարեկան գործունեության հաշվետվությունը սահմանված կարգով ներկայացնում է Համալսարանի գիտական խորհրդին, որի հավանությանն արժանանալուց հետո ներկայացնում է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդին,

2) ԳՊՀ ռեկտորը Համալսարանի հոգաբարձուների խորհրդին է ներկայացնում Համալսարանի տարեկան ֆինանսական հաշվետվությունը և հաջորդ տարվա բյուջեի նախագիծը,

3) ԳՊՀ պրոռեկտորները հաշվետվություն են ներկայացնում ԳՊՀ ռեկտորին և գիտական խորհրդին՝ Համալսարանի ուսումնագիտական և տնտեսատեխնիկական գործունեության մասին,

4) ԳՊՀ գլխավոր հաշվապահը հաշվետվություն է ներկայացնում ԳՊՀ ռեկտորին և գիտական խորհրդին՝ Համալսարանի ֆինանսական գործունեության մասին,

5) ԳՊՀ դեկանները հաշվետվություն են ներկայացնում ԳՊՀ գիտական խորհրդին՝ համապատասխան ֆակուլտետների գործունեության բոլոր ուղղությունների մասին,

6) ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները հաշվետվություն են ներկայացնում ԳՊՀ գիտական խորհրդին՝ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին,

7) Համալսարանի յուրաքանչյուր վարչական աշխատակից հաշվետվություն է ներկայացնում ԳՊՀ գիտական խորհրդին՝ իր գործառույթների իրականացման մասին:

8) Համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված տարեկան հաշվետվությունները հրապարակվում են ԳՊՀ համացանցային կայքում և տպագրվում՝ ներկայացնելով Համալսարանի ներքին ու արտաքին շահակիցներին:

11. Համալսարանն իր գործունեության բոլոր ուղղությունների մասին տեղեկատվություն հրապարակում է ԳՊՀ կայքի /www.gsu.am/ և սոցիալական կայքերի միջոցով՝ հանրությանն իրազեկելով իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի, վերապատրաստումների, լրացուցիչ կրթական ծրագրերի, գործունեության ընթացիկ արդյունքների, ներբուհական ակտերի՝ կանոնակարգերի և ընթացակարգերի, Հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և

ֆակուլտետային խորհուրդների որոշումների, Համալսարանի տարեկան բյուջեի, գնումների գործընթացի, թափուր աշխատատեղերի, գիտահետազոտական աշխատանքների, միջազգային ծրագրերի և այլ գործընթացների վերաբերյալ:

12. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Համալսարանի գործունեության մասին համապատասխան տեղեկատվություն տրամադրվում է պետական մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, գործընկեր կազմակերպություններին, կրթական, գիտական հաստատություններին, հասարակական կազմակերպություններին, այլ կառույցների:

13. Համալսարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրվում է գործընկերներին՝ պայմանագրեր կնքելիս, համատեղ ծրագրեր նախապատրաստելիս և իրականացնելիս, քննարկումներ անցկացնելիս, դիմորդների, ուսանողների և նրանց ծնողների հետ հանդիպումներ, այլ միջոցառումներ կազմակերպելիս:

14. Համալսարանի վերաբերյալ տեղեկատվությունը ներքին և արտաքին շահակիցներին տրամադրվում է բանավոր և գրավոր ձևերով, փոստային նամակագրության, էլեկտրոնային հաղորդակցության, հեռավար՝ առցանց և անցանց ձևաչափերով:

15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ԳՊՀ հիմնադրին, ՀՀ կրթության կառավարման լիազոր մարմնին, հոգաբարձուների խորհրդին, պետական իրավասու մարմիններին են ներկայացվում համապատասխան հաշվետվություններ՝ անհրաժեշտ քանակական և որակական ցուցանիշներով, պահանջվող տեղեկություններ՝ ուսանողների ընդունելության, շարժի, ակադեմիական առաջընթացի, շրջանավարտների քանակի, բուհի լիցենզավորման, ֆինանսատնտեսական գործունեության և աշխատանքի այլ ուղղությունների վերաբերյալ: